

## ԵՐԱՆՈՒՀԻՄ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴՅԱՆ

### ԱՍՏՂԻԿ ԴԻՑՈՒՀՈՒ ԱՂԵՐՄԵՐԸ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Աստղիկ դիցութու պաշտամունքային տոմերից զիխավորը, ինչպես վկայում են մատենագրական տվյալները, Վարդավառն է: Վերջինս սինկրետիկ տոնախմբություն է, այն իր մեջ ներառում է բազմաթիվ հավատալիքային տարրեր, ծիսական արարողություններ, որոնք նժբախտաբար աղոտ և ոչ ամբողջական ձևով են ավանդվել: Հնում՝ հեթանոսական ժամանակներում, այն տոնվել է շարժական տոնարացուցով՝ Ամանորի նախաշեմին, իսկ 552 թ. հայկական քրիստոնեական մեծ տոնմարի հիմնումով դարձել է կայուն-շարժական (ըստ լուսարեգակնային տոնմարի), 35-օրյա շարժականությամբ և առ այսօր տոնվում է Զատկից 14 կամ Հոգեգալատից 7 շաբաթ անց՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Աստղիկի և Վարդավառի փոխառնչության մասին հավաստիացումներ ենք գտնում «Թայսմատուրք»-ում. «Զի յայնմ աւոր՝ հեթանոսք ափողոդիտեայ տօնէին: Եւ զնա կոյս ասէին ի փրփրոյ ծովու և յարենք ծնէալ: Եւ կոչէին զնա վարդամատն և ոսկեծի և զվարդն նմա ընծայ մատուցանէին: Վասն այսորիկ անուանէին զոօնս զայս Վարդավառ»<sup>1</sup>: Ուշագրավ այդ պատառիկը շեշտում է Աստղիկի՝ որպես շոներից ծնկած կուսի հանգամանքը, ինչպես նաև մատնացուց է անում Վարդը՝ որպես յուրահատուկ ընծայումի առարկա, որի հիմնա վրա էլ բացատրում է տոնի անվանումը:

XIII դարի վերջին, Կիլիկիայում ստեղծված Տօնապատճառ ձեռագիր ժողովածուն<sup>2</sup> ավելի է զարգացնում Աստղիկ-Աֆրոդիտեի ծննդյան մանրամասները և աներկրայորեն «Վարդավառ» անունը բխեցնում Վարդ ծաղկի անունից: Խնդրո տարակա հատվածում, որի հեղինակն է համարվում Հովհաննես Կողենն վարդապետը, ի մասնավորի նրա «Վասն Վարդավառի Տամին» գրվածքում Վարդավառը դիտվում է Վաղենջական ժամանակների խորհրդապաշտական մի տոն, որը բոլոր տոներից ամենաներևին և պայմանագույնն է: Ի թիվս հեթանոսական մի շարք աստվածությունների՝ Արամազդի, Անահիտի, Վահեի և Վահագնի, այդտեղ հիշատակվում է նաև Աֆրոդիտե-Աստղիկն<sup>3</sup> իր տոնացուցով. «Եւ յամանային ժամա-

<sup>1</sup> Թայսմատուրք, Կ. Պոլիս, 1730, էջ ԶԺԶ:

<sup>2</sup> Ս. Թակորեանց ձեռագրատում, ձեռ. № 1272:

<sup>3</sup> Ըստ միջնադարյան գրավոր հուշարձանների՝ Աստղիկը հունական Աֆրոդիտեի համապատականամությունն է:

ճակն տաւալէին Ավրոդիտէ<sup>4</sup>: Վերջինիս ծնունդը և նրա պաշտամունքային տոնի՝ Վարդավառի անունը բացատրելու նկատառումով հեղինակը վերապատմում է աստվածների ծննդաբանությունը, թէ ինչպես տիեզերակալ Կրոնոս աստծու անդրանիկ որդիկ՝ Արամազդը, կասկածելով, որ հայրը կարող է ունենալ իրեն մրցակից երկրորդ որդուն, վերջինիս ծնվելուց անմիջապես հետո սպանում է եղբորը և նետում ծովը. «Եւ ծովու փրփրեալ յարենէն, եւ ի սպիտակ փրփրոյն ընծայէր զԱվրոդիտէս<sup>5</sup>, զոր եւ ստարանեալ ասէին, թէ ընդ որ անցանէր եւ ընթանայր, լընթացիցն արին իշխանէր լուսից նորա, եւ կարդ եւ մուրտ բուսանէր: Խակ խաւարեալ ի լուսոյ հեթանոսական սովորութիւնն զուանն նորա Վարդավառ անուանէին, եւ զվարդ նմա ընձայ մատուցանէին»<sup>6</sup>:

Վարդավառն, աշխարհագրական տարածվածության առումով, բացի Հայաստանից, ընդգրկում էր նաև Կապադովկիան և Վրաստանը: Կապադովկիայում այն հայտնի էր հունատառ թարուսակ' անունով և տոնվել է Զատկից 6 շաբաթ հետո, իսկ վրացական աղբյուրներում՝ Վարդորա կամ Վարդորիս անուններով<sup>7</sup>: Վրացական այդ ծիսանունը մեկնվում է որպես «վարդի տոն»: Ն. Մառը, ամիսների շարժականության և այլ փաստերի հիմնա վրա, տոնակատարման ժամանակը դիտում է հունիսի 7-ը<sup>8</sup>: Վրացական Վարդորիսայի մասին մի որդիշ վկայություն կա նաև Կոստանդնուպոլիսի նշանավոր պատրիարքներից մեկի՝ Յովհան Պահողի Նոմօքանան-ի վրացական տարբերակում պատերի թվարկման ժամանակ, դրտեղ սրբոց առաքելոց պահըն անվանվում է Վարդորիսայի<sup>9</sup>:

«Վարդավառ» անվան ստուգաբանության պատմությունն ընդգրկում է բավական երկար ժամանակաշրջան: Եթէ հաշվի չառնենք միջնադարի մատենագիրների կենդ ստուգաբանությունները, ապա անգամ գիտական ստուգաբանության փորձերը մեզ կհասցնեն XIX դարի կեսերը՝ ապացուցելով նրա նկատմամբ եղած մեծ հետաքրքրությունը:

Գիտականների մի մասը (Դ. Ալիշան, Ն. Տաղավարյան, Վ. Տեր-Մինայան, Մ. Արենյան) տոնի ակունքները փորձում է կապել Աստոիկ դիցութու, մյուսները (Գ. Ֆնտզյան, Ս. Ծոցիկյան, Կ. Մելիք-Փաշայան, Զ. Ռասեր) Անահիտ աստվածութու պաշտամունքի հետ: Սրանցից բոլորովին տարբերվող և նշված աստվածություններից և ոչ մեկին չառնչվող տեսություններ են զարգացրել Ս. Պարոնյանը և Գ. Ղափանցյանը:

<sup>4</sup> Տօնապատճառ, Ժ. Զ.

<sup>5</sup> Ի տարբերություն Մ. Խորենացու, որը հենվում է Սիրիլլայի Բաղրդած ավանդության վրա, Աստոիկը ոչ թե Կրոնոսի (Զրկան) դուստրն է, այլ վերջինիս քոյրը և Նոյի դուստրը (տե՛ս Մովսէսի Խորենացու Մատենագրութիւն, Պատմութիւն Հայոց: Վենետիկ, 1865. էջ 16):

<sup>6</sup> Տօնապատճառ, Ժ. Զ.

<sup>7</sup> Պ. Մուրադյան, Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստան: ՊԲՀ, № 1-2, 1996, էջ 125:

<sup>8</sup> H. Marr, Եօրու յանուառություն 1905. c. 55-56.

<sup>9</sup> Լ. Մելիքսեթր-Բնկեան, Վարդավառը վրացոց մէջ, Արարատ, Եշմիածին, 1918, № 1-3, էջ 133:

Գ. Ֆանտզյանը «Վարդավառ» անունը մեկնում է ուարդ «ջուր» և ուրդ «ջրի ճամփառի բառերի օգնությամբ<sup>10</sup>, Բայր Ալիշանը անունն առնչում է վարդ ծաղկանվան հետ<sup>11</sup>:

Ս. Մողիկյանի տեսակետով անունը, թերևս, պետք է կցել սամակրիտերեն vard «ջուր» բառին և երկրորդ մասի մեջ տեսմել հայերեն վայրել բառարմատը՝ «Վայր մետել, թափել, ցայտեցնել» իմաստներով, այսինքն՝ մի տեսակ հիբրիդային կազմովյուն է ենթադրում<sup>12</sup>:

Օստ ինքնատիպ տեսակետն է առաջ քաշել Սութիաս վարդապետ Պարոնյանը: Նա վարդավառը դիտում է որպես գրադաշտական ծագում ունեցող մի տոն, իսկ անունը կապում զենդերեն աերա «կրակ» և վառ բաղադրիչների հետ, որ թարգմանվում է «կրակավառ», «հրավառ» կամ «հրալոյց»<sup>13</sup>:

Ինչպես իրավամբ նկատել է Կ. Մելիք-Փաշայանը, նախ՝ Վարդավառը ոչ մի առնչություն չունի կրակի հետ, և երկրորդ՝ Վարդ բառը չի կարող կցվել աերայի: Վերջինս նոյնպես հակած է անունը դիտել որպես vard «ջուր»-ի հետ առնչող կազմություն: Մի խոսքով, նա ընդունում է Գր. Ղափանցյանի տեսակետը և բուն իմաստը դիտում «ջրասրբկում»<sup>14</sup>:

Գր. Ղափանցյանը նոյնպես փորձում է անվան ծագումը կապել ջրի պաշտամունքի հետ, թեև բարդ ծագման աղբյուրը, ի տարբերություն նախորդների, դոդեք այն փնտրում էին հնադիրանական աշխարհում, կողմնորոշում է մեզ դեպի փոքրասիական լեզվոլորտը: Հաստ Գր. Ղափանցյանի՝ անունը սերում է ինքներեն vard «ջուր» և այդ «զվանալ, լցնել, սրսկել» տարրերի միակցումից<sup>15</sup>:

Բարի ստուգաբանությանը է անդրադարձել նաև Զ. Ռասելը հաստուկ աշխատության մեջ, որտեղ ծիսանունը բացատրում է որպես «վարդ բերող, պարզւող», այն համեմատելով սողությունը: Բաձբերությունը բարի, մասնավորապես -թը «բերող» մասի հետ, որ սերում է հին իրանական \*barana-ից<sup>16</sup>:

Հաստ ժողովրդական հավատալիք՝ սրբերի և նահատակների, ընդհանրապես արդար հոգիների գերեզմանի վրա Վարդավառի գիշերը լուս է իշնում, և այդ լուսը տեսնողի նվիրական իդեալը ու ցանկությունները անպայման կատարվում են: Տարածված է նաև այն պատկերացումը, թե իբր Հոգեգալատի օրը բոլոր սրբերը բարձրանում են երկինք, իսկ Վարդավառին նորից իշնում իրենց տեղը՝ ընդունելով լուսավոր աստղերի կերպարանը<sup>17</sup>: Այդ առումով հետաքրքիր է Ա. Մուշեղյանի

<sup>10</sup> Տե՛ս Արտակ արքեպիսկոպոս Մանուկեան, Հայ Եկեղեցու տօնմերը, Թևքրամ, 1980, էջ 179:

<sup>11</sup> Ղ. Ալիշան, Հիմ հասաւոր կամ նեթանոսական կոսմօք Հայոց, Վեմետիկ, 1895, էջ 364-365:

<sup>12</sup> Ս. Մողիկյան, Վարդավառ, «Հայաստանի կոչմակ», 13 Բուլիսի, 1929, էջ 882:

<sup>13</sup> Տե՛ս Արտակ արքեպիսկոպոս Մանուկեան, Աշխ. աշխ., էջ 179:

<sup>14</sup> Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցություն պաշտամունքը, Ե., 1963, էջ 129-130:

<sup>15</sup> Գ. Կալանցոն, Խետուկ օրու յ արման, Երևանի Պետական համալսարանի գիտական աշխատություններ, թ. 14, Ե., 1940, էջ 279-280:

<sup>16</sup> J. Russell, The etymology of Armenian vardavar, Annual of Armenian Linguistics, Vol. 13. 1992, էջ 64-66.

<sup>17</sup> Հ. Խառասուան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոմերը, Ե., 2000, էջ 183:

առաջադրած տեսակետը: Ինչպես ցոյց է տվել վերջինս իր մի հոդվածում<sup>18</sup>, Վարդավառը զուգադրելի է Բին իրանական տոմարի առաջին ամսվամ՝ \*Frawarda-ին և Բամընկնում է Բայկական Բնագրովն տոմարի 13-րդ ամսվա՝ Աւելեաց օրերի (այլ կերպ արարչության օրեր կամ արարչականներ) հետ: Վարդավառն, ըստ հիշված ուսումնասիրողի՝ զրադաշտական հավատքում՝ Հրաշակերտությանը /Frāšō-kereči/ ամենամյա ցիկլում փոխարինող «պահապան ոգիների զարթոնքի» «Fravašinām» կոչված տոմի զուգահեռն է: Այդ մեկնությունն ակամայից հիշեցնում է Պայծառակերպության շղթայում Մովսես և Եղիա մարգարեների հրաշափայլ հայտնության դրվագը: Ուստի այդ բացատրությունը հավաստիրեն ի հայտ է բերում հայկական ժողովորդական հավատալիքի (հմմտ. լուս իշմի գերեզմանի) և մյուս կողմից քրիստոնեական Պայծառակերպության, որպես հրաշագործ երևութի, աղերսները:

Վարդավառյան տոմերի արմատներն, ինչպես տեսնում ենք, տանում են պատմության խորերը և կապվում ջրի, պտղաբերության հետ: Տոնախմբության խորհրդանշական առանձնահատկությունը ջրի պաշտամունքի հետ կապված արարողությունների շարքն է: Ուստավորները պարտավոր էին լողանալ (ընդօրինակել Աստղիկի<sup>19</sup>ն) գետում, և եթե մոտակայքում այդպիսի լիճ կամ գետ չգտնվեր, ապա պիտի ցողվեին աղբյուրների ջրով: Իրար Վրա ջուր շաղ տալու սովորություն մաքրագործումի և ապաշխարանքի, նոր ուստի հաստատման առաջին, բայց ոչ միակ ատրիբուտն էր: Իրա մեջ պետք է տեսնել ջրիների առավելի՝ ծիսական արարողության վերածված վերիուշը. «Վարդավառը նոյեան տապանին Հայաստանի Արարատ-Մասիս լեռան Վրա հանգչումի յիշատակին ընծայուած տօն մը եղած է մերթ: Զի նոյ ես իր տապանով ջրերու մէջ մնաց, աղաւանիներ թոցուց, եւ զոր մատուց ջրիներին ազատուելուն համար»<sup>20</sup>: Այդ սովորություն, իհարկե, բացառիկ ազգային չի կարելի դիտել, որովհետև մկրտության նմանօրինակ դրսնորումներով աչքի են դնենու գրեթե բոլոր ժողովորդները, որոնք վերապերել են բնապաշտության նախնական փուլերը: Արհավասիկ, միշտադարի խոչոր գիտնական Բիրումին Աշում է, որ իրանցիները նոյն պես սովորություն ունեին միմյանց Վրա ջուր սրվելու Նօ-Ռօշ-ի օրերին, որ կոչվում էր Անրիցեցան<sup>21</sup>: Եվ իհան է ավելի կարևոր վում մեր ուսումնասիրության տեսանկյունից. դա այն է, որ ջուր պարզես կույսի կուոք է զունվել 60-ական թվականներին՝ Մարիում (Անրկայիս Թեւ-Հարիրի) պեղումներից և թվագրվում է Ն.Ք. II հազարամյակի առաջին կետով: Եվ ինչպես պարզել է Փրանսիացի Բնագետ Պարոն, այդ կույսը եղել է ոչ այլ ոք, քան իշտարը<sup>22</sup>: Ստացվում է, որ Աքեղյանի կանխատեսումը իշտարի՝ ջրերի աստվածութիւն լինելու մասին արդարանում է, նոր հորիզոն բացում Աստղիկ-Իշտար զուգահեռների ոլորտում:

<sup>18</sup> Ա. Մուշեղյան, Հայոց բուն տոմարի շուրջ: «Հանդէս ամսօրենայ», Վիեման, 1996, էջ 445-446:

<sup>19</sup> Ա. Մուշեղյան, Աշվ. աշխ., էջ 882:

<sup>20</sup> J. Russell, Աշվ. աշխ., էջ 63:

<sup>21</sup> Вардиман, Е. Е. Женщина в древнем мире, 1990, стр. 44-47.

Զորի պաշտամունքը հարատևել է հայոց մեջ որպես հնագույն վերապրոկ: Հատկապես մեծ տեղ է տրվել ակունքների և հոսող ջրերի պաշտամունքին: Ինչպես նշում է Մ. Արեդյանը, կիրակի և ուրբաթ օրերին դրանց առաջ մոտ են վառել և խունկ ծխել, աքաղաղ զոհել և աղոթք արել, իսկ նորահարսները հարսանիքից ժամու, առաջին անգամ ջրի գնալիս, պաշտվող աղբյուրին պարտավոր էին ցորեն մատուցել<sup>22</sup>:

Վարդավառի խորհրդապաշտական արարողություններից մեկն է աղավճի թողմելն է: Ցուրաքանչյուր ուխտավոր պարտավոր էր մեկ սպիտակ աղավճի արձակել, որն, ինչպես հայտնի է, սիրո աստվածութու Ավիրական թռչունն է և անբիծ ու անարատ հոգիներին է խորհրդանշում: Դրա անդրադարձը ներկա է Ս.Գրքում, Նոյի առասպեկի մեջ, երբ ինքը՝ նահապետը, անցմելով քավության ահուելի ուղին (նկատի է առնվում ջրեթեղի պատճառած տառապանքները), փրկության ավետարերի առաքելությունը վստահում է աղավճում: Եվ այդ օրվանից Աստված օրինում է մարդկությանը և կապում նոր ուխտի կամարը՝ ծիրանի գոտին<sup>23</sup>:

Վարդավառի սիմվոլ են դիտվում վարդը և «անմահական խնձորը»: Թե ինչո՞ւ է ծաղիկներից նախապատվությունը տրվել վարդին, և արդյո՞ք հեթանոսական ժամանակներում այդ ծաղիկը պաշտամունքի առարկա է եղել, թե ոչ, դժվար է միանշանակ ասել, քանի որ գրավոր փաստեր չկան: Այդուհանդերձ, վարդը որպես Աստիկի Ավիրական ծաղիկ, առկա է և՛ ճրա կերպարային Ակարագրության, և՛ ծիսական արարողակարգի մեջ: Եվ դա հիմք է տվել միջնադարի հեղինակներին ստուգարանելու «Վարդավառ» անունը հենց այդ ծաղկի անվան հետ կապված, իբրև «Վարդատոն», «Վարդ վառող» և այլն:

Գորար վարդն վառ առեալ  
ի վերից վարսիցն արփենից՝  
ի վեր ի վերայ վարսիցն  
Ծաւալէր ծաղիկ ծովայիշը<sup>24</sup>:

Տնական օրերին ծաղկահանդեներ էին կազմակերպվում, մարդիկ միմյանց ծաղիկներ էին նվիրում, ծաղկեն պասկեներ հագնում, մի բան, որ կարծես իր արտացոլումն է գտնում հոռմեացիների Rosalia կոչված տոնի մեջ. Վերջինս քրիստոնեության դարաշրջանում միացվում է հինունքի վերջին օրվա՝ Pentecoste-ի ժամը<sup>25</sup>: Ի դեպ, հայկական ծիսական պահուղություն նախորդող վերջին օրն ընդունված է անվանել Մաղկամուտ: Դրանց աղերսներն ակնառու են, իսկ արմատները թաղված են խոր հնադարում:

<sup>22</sup> Մ. Արեդյան, Երկեր, Բ. Է.: Ե., 1975, էջ 52:

<sup>23</sup> Աստուածաշունչ, Մայոց, Թ 11-17:

<sup>24</sup> Գրիգոր Նարեկացու Վարդավառի տաղը և Բավաստում է, ըստ Մ. Արեդյանի (տե՛ս Երկեր, Բ. Է., 1975, էջ 159), վարդի առնվուրյունն այս տոնի ժամ:

<sup>25</sup> J. Russell, Աշվ. աշխ., էջ 64:

Միջնադարի մեծ մտածողներից մեկը՝ Գրիգոր Մագիստրոսը, իր թղթերից մեկում, խոսելով խնձորի առասպելական բուժիչ հատկությունների մասին, նշում է հետևյալը. «Խնձորս երեւնն յԱստղկայ շնորհեալ, ոչ միայն կնոշն հասանիր տոփանաց, այլև զենան շնորհեալ պատժեցն մահու»<sup>26</sup>: Գր. Մագիստրոսը խնձորին վերագրում է կենսատու, առասպելական հատկություններ և այն դիտում Աստղիկի պարզեց: Դրանց առնչությունն արծարծող հետաքրքիր փաստեր է Աերկայացնում Ա. Մնացականյանը: Նա, քննելով միջնադարյան զարդարվեստի այն նմուշները, որոնցում պատկերված է խնձորը բերանում մի աստվածութի, առաջ է թերում վիշապասպան կուպի մասին ավանդությունը և գտնում, որ կուպի համար հաղթանակի գենք է ծառայել անուշահոտ խնձորը, և որոշ վերապահումով եզրակացնում, թե դա Աստղիկ դիցութուն կարող էր վերաբերել: Այդ կապակցությամբ նա գրում է. «Ուշագրավ է հերոս կինն իր պտղաբերության սիմվոլ խնձորով, որը հայթում է վիշապին: Ուշագրավ է և այն, որ այդ կնոշ և խնձորի պատկերը քանդակվում են և դառնում պաշտամունքի առարկա: Իսկ, ինչպես տեսանք, մեզ մոտ խնձորը համարվել է Աստղիկ աստվածութու սիմվոլը: Արդյոք մեջքերված գրուցում չի՝ պահպանված նենց Աստղիկի հուշը»<sup>27</sup>: Եթե ավանդազրուցում խնձորը վիշապասպան գենք է, ապա ազգագրական սովորությների համաձայն՝ հարսանելական խնձորը խնդումը զարդարող մաս է և կատակ-խաղերի պարագայում բաժին է ընկնում քաջ փեսացուին:

Անմահական խնձորի մասին հետաքրքիր ավանդություն է պահպանվել շատափացիների շրջանում: Նրանք հավատում էին, որ Գրգոր Լեոնան կիրճից (որտեղ լողանում է Աստղիկը, ըստ Գ. Սրբանձույանցի գրառած հայտնի ավանդության)<sup>28</sup> դուրս է գալիս «անմահության խնձորը» և շրջում ողջ երկրամասում, ուստի շատափացիներից շատերն այդ գիշեր անքուն հսկում էին գետի ափին, որպեսզի չվրիպն այն տեսնելուց: Եվ ով արժանանում էր այդ բախտին, նրա խնդրանքն իրականանում էր<sup>29</sup>:

Ընդհանրացված սովորութիւն համաձայն՝ Վարդավառից առաջ խնձոր ուտելն արգելված էր, ինչպես խաղող ուտելը՝ Ա. Աստվածածնի տոնից առաջ: Վարդավառով բացվում էր պատը՝ որոշ հանդիսաւոր մերով համեմված: Այսպես. վաճեցի և շատափացի երիտասարդները պատրաստում էին բազմաթիվ դեզեր և որանք կրակի տալով՝ խորովում խնձորը և ուտում<sup>30</sup>: Հետո խարուցի շուրջ կազմակերպում էին խմբապարեր՝ սիրային կատակերգերով, ինչպես այս մեկը.

Վարդն ի պացվե Վարդվերի կիրակին,  
Քյո սերն ընգել մէջ իմ սրտի պրակին,

<sup>26</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը: Ալեքսանդրապոլ, 1910, էջ 50:

<sup>27</sup> Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ: Ե., 1955, էջ 542:

<sup>28</sup> Գ. Սրբանձույանց, Երկեր, Բ. 1, էջ 71:

<sup>29</sup> Խ. Սամուելյան, Հիմ Հայաստանի կոլլտուրան, Բ. Ա.: Ե., 1937, էջ 287:

<sup>30</sup> Հ. Խոռատյան-Առաքելյան, Աշխ. աշխ., էջ 176:

Քյա նազերով, քյա խորոտիկ ախ, վի՞րն ես,  
Աշխարհ գիյտի, ալամ գիյտի, ա՞յս իմն ես:

Ազգագրական որոշ շրջաններում տոմի մեջ դրված էր նաև ծնողներին այցելելու արգելքի վերացման խորհրդարությունը: Նորաբարսները իրավունք էին ստանում այցելության գնալու իրենց ծնողներին և այնուհետ մնալու 15 օր:

Հայաստանի ազգագրական շրջաններից յուրաքանչյուրն ուներ Վարդավառի ճպիրագործման իր սրբատեղին, ինչպես, օրինակ, Քղիի հայերը ստվորություն ունեին ովասի գնալ Սուրբ Լուս լու, որի գազաթին արված երդումը տեղի հայերի համար ամենամեծ երդումն էր: Մասնակիցները ովասի էին գնում սրբավայրեր՝ մեկ առ մեկ իրագործելու հավատքի պատվիրանները<sup>31</sup>: Հանդիսություններին մասնակից դառնալը պարտադիր էր ամենու և, կարծես թե, խորհրդանշում էր նոր ովասի հաստատման գաղափարը: Ինչպես հաստատում են ազգագրական ստվորությունը՝ եռորյա, երբեմն էլ մինչև մեկ շաբաթ տևող ովասի ժամանակ «մատադեր կը զոհին, թովս մաքի, երինչ, գառնուկ եւ աղաւան: Մատադացուներու պարանոցէն կը կախնան բռնժմներ, եղջիղները կը զարդարեն ոսկեգոյն թուղթերով ու անոնց ծայրերը կը տմակն մէյմեկ մոմ. վրանին ալ կը նետեն մէյմեկ շուրջառ: Քահանան կ'օրինէ, զոհ կը զենուն շաբաթէն կիրակի լուսնակիք գիշերուան կիսուն: Անկէ առաջ զոհուածը պիղծ է»<sup>32</sup>: Այդու, ծիսակատարության պարտադիր բաղադրիչներից մեկը պիտի լիներ զոհաբերում՝ սրբազն մատադը: Հեթանօսական զոհաբերության ծեսի պատկերն է փորձում ուրվագծել Ա. Չոպանյանը հետևյալ հատվածում: «Զոհի ատեն քրմապետող կ'առնէր ափ մը արիւն եւ կը սրսկէր փայտակոյտիմ<sup>33</sup> Վրայ, յետոյ Սրածանի ալիքներէն կ'առնէր սուրբ ջուրը և ոսկե ցնցուղով կը սրսկէր ժողովուրդի Վրայ, քաւելու համար անոր մեղքերը»<sup>34</sup>:

Ինչպես նշվեց, ստվորություն կար զոհաբերել հատկապես թիսամորթ կենդանիներ: Բոլցանը հայերը հավատում էին, թե եզն այնքան արդար է, որ Վարդավառի ջրի մեջ սառուց կարող է տեսնել<sup>35</sup>:

Հատկանշական է, որ զոհ էին մատուցում ոչ միայն կենդանիներին, այլև բուսական հումք և ընտառիչն: Գրեթե բոլոր վայրերում Վարդավառին եկեղեցի են բերում ցորենին հասկեր և աղաչում Աստծուն, որ արտեր անվճառ մնան մորեխից և

<sup>31</sup> Վ. Տէր-Միմասեան, Անգիր դպրութիւն և Բին ստվորոյթներ, Բ. Բ: Կ. Պօլիս, 1904, էջ 150-151:

<sup>32</sup> Վարդավառի աւանդութիւնները, «Մաղիկ», 1895, էջ 412-418:

<sup>33</sup> Հիշված «փայտակոյտ» ազգագրական վերապրուկ պիտի դիտել խաչափայտը կամ խաչրուը: Այսպես, օրինակ, Ազուլիսում, որպես կանոն, Առաքարսները տոմին նախորդող օրերին ամամի մեջ ցորեն կամ զարի էին ծլեցնում և տոմի օրը ամամի մեջտեղում մեկ մետրանց մի փայտ պիտի տակեին ու զարդարեն խմձորով, այլ պտուններով ու վարդերով և դրամ խաչ տեսք տային, որ կոչվում էր խմդում: Կեսօրից մետու խաչափայտը էր խմդում «Բնկման» և «կողոպուտի» տեսարանը (տե՛ս Հ. Խառաւոյան-Առաքելյան, Աշվ. աշխ., էջ 177-178):

<sup>34</sup> «Մաղիկ», Աշվ. մոդվ., էջ 412-418:

<sup>35</sup> Խ. Սամուելյան, Աշվ. աշխ., էջ 182:

կարկուտից. «Աստուած, պարզերես պահէ մեզ Վարդավառի ձիւն ու բուքէն ու կարկուտէն, փետրուարի տաք ու շոգէն»<sup>36</sup>.

Ցուցանշառման ժամանակակից պատճենների մեջ կայուն է առաջարկությունը՝ կամ աղավաղական դիմումը կամ աղավաղական դիմումը կամ աղավաղական դիմումը:

Ցուցանշառման ժամանակակից պատճենների մեջ կայուն է առաջարկությունը՝ կամ աղավաղական դիմումը կամ աղավաղական դիմումը կամ աղավաղական դիմումը:

Քրիստոնեական դարաշրջանում Վարդավառը վերափոխվում և զուգակցվում է տաղավարյան տոներից մեկին՝ Քրիստոսի Պայծառակերպությանը կամ Ալլակերպությանը. Տոնն այդ անունով հայտնի էր դեռևս IV դարում. Խնչակն հաղորդում են միջնադարյան աղբյուրները, հեթանոսական տոներից շատերը հարմարեցվեցին քրիստոնեական ծիսակարգին և բնականաբար անվանափոխվեցին, որոնց թվում նաև Վարդավառը՝ Լուսավորչի նախաձեռնությամբ: «Իսկ Սուրբ Գրիգոր, ածեալ զմեզ ի լոյս Աստուածագիտութեանն, խէր դիական սովորութիւնն, եւ ի ճշմարտութիւնն փոխէր... եւ զվարդեւորիս տաւնել՝ զերևուն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի լուսով ի Թափովրական լերին՝ արինադրէր»<sup>37</sup>: Հատ ավետարանական ավանդության, Թաքոր լեռն այն սրբավայրն է, որտեղ տեղի ունեցավ Հիսուսի պայծառակերպումը, և որտեղ, ավելի ուշ, Կոնստանդին Մեծ կայսեր մայրը՝ Հեղինեն, կառուցեց այդ հիշատակը խորհրդանշող եկեղեցին:

Հատ Ավետարանի՝ Հիսուսը երեք աշակերտների հետ բարձրանում է Թաքոր լեռ՝ աղոթելու նպատակով: Եվ մինչ աղոթում էր, նրա դեմքը սկսում է պայծառանալ և փայլել այնպես, որ ամբողջ լեռը լուսի ցոլքերից շողարձակում է: Առաքյալ-ներն այդ լուսից անմիջապես արթնանում և ապշարար ու երկուղած ծումի են գալիս: Այդ պահին ճառագայթափայլ մի ամպ ծածկում է Քրիստոսին, որը զրուցի էր բռնվել համկարծակի հայտնված երկու մարգարեների՝ Մովսեսի և Եղիայի հետ: Լուսի ցոլքերի միջից համկարծ լավում է մի ամենագոշ ձայն, որն ավետում է. «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք»<sup>38</sup>: Առաքյալներն այդ տեսիլքից ահաբեկված՝ ծնկի են գալիս, իսկ Քրիստոսը դիմում է նրանց՝ ասելով. «Ուժի ելեք, մի՛ վախենաք»<sup>39</sup>: Եվ համկարծ ամպի ձևով ամենանում է տեսիլքը, և առաքյալների աչքի առջև վեր է հասնում իրենց վարդապետը:

Այստեղ առաջին անգամ Քրիստոսը հայտնվում է աշակերտներին իր աստվածային շնորհմերով: Երկնային տերը հաստատում է որդու աստվածային էությունը մարդկանց առաջ, մեկտեղ բերում Սուրբ Երրորդությունը՝ հանձին իրեն, Որդուն և Սուրբ Հոգուն, ժամանակավորապես արարում երկնային արքայության պատկերը, այն արքայության, որ անվանման է լինելու և ծայր է առնելու Ամեն դատաստանի օրվանից սկսած: Երկնային Հայրը դրանով կարծես ուզում էր հասկանալ, որ Մովսեսը և Եղիան (Հովհաննես Մկրտիչ) արդեն վաստակել էին երկնային

<sup>36</sup> Ա. Մելիք-Փաշալյան, Աշվ. աշխ., էջ 130:

<sup>37</sup> Տօնապատճառ, ԺԶ:


<sup>38</sup> Աստուածաշունչ, Մատթ., ԺԷ 5:

<sup>39</sup> Նույն տեղ, Մատթ., ԺԷ 7:

արքայությունը, իսկ Հիսուսը դրախտի դրմերից մերս պիտի մտնի՝ հանդերձալ աշխարհ տեղափոխվելոց անմիջապես հետո:

Հարկ է նշել, որ մենահամար աստվածաբաները Վարդավառի և Պայծառակերպության առնչությունը փորձում են բացատրել այլաբանությունը եղակետ ընդունելով. ինչպես Վարդը կոկոնի մեջ է ծածկված լինում նախքան բացվելը, նույնպես և Տերը նախքան այլակերպվելն իր մեջ ուներ աստվածության պայծառությունը, և ինչպես Վարդը բացվելով՝ ամենքին երևում է իր ողջ հնայքով, այնպես էլ Տերը պայծառակերպվելով՝ հայտնում էր իր աստվածային էությունը: Ահա թե ինչպես է ձևակերպում իր պատկերացումն այդ նախան Վարդան Վարդապետ Տեր-Մինապան. «Եւ այնուհետեւ եկեղեցական քնարն ալ սկսաւ գովարձել այն վարդն, որոյ կոկոնէն դուսու ծեցաւ ու ծաղկեցաւ աշխարհի փրկութեան Արեւն ու Լոյս»<sup>40</sup>:

Վերը բերված փաստերը վկայում են հօգուտ Աստղիկի և Վարդավառի փոխառնչության: Վարդավառի հանդեսներն ել մասամբ կատարվել են այն տեղերում, որոնք անցյալում եղել են Աստղիկին ծոնված սրբավայրեր և ուխտատեղիներ: Վարդավառն, այսպիսով, Աստղիկ դիցություն պաշտամունքի ծիսական մի գողտրիկ վերապրուկն է:



<sup>40</sup> Վ. Տեր-Մինապան, Աշվ. աշխ., էջ 146: